ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/126 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Քարշիչ պահարան	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	Քարշիչ պահարան Քարշիչ պահարան. չափերը՝ 1800(±5)x860(±5)x2300(±5) մմ, մեկուսացված պատերով և ներկառուցված պահարանով: Ամբողջությամբ եռակցված մետաղական շրջանակ՝ պատրաստված ուղղանկյուն մետաղական պրոֆիլից, կոշտ մոդուլային կոնստրուկցիա՝ պատրաստված ոչ պակաս քան 1 մմ հաստությամբ պողպատե թիթեղից, պատերը պատված էկոլոգիապես մաքուր պոլիմերային փոշիանման ներկով, որը դիմացկուն է բոլոր տեսակի լվացող միջոցների նկատմամբ: Աշխատանքային մակերեսը՝ քիմիապես և ջերմակայուն, ամբողջական առանց կարի կերամիկական ջնարակապատ սալիկ SRW: Սալիկի երկարությունը 1800(±5) մմ, խորությունը 750(±5) մմ, բարձրությունը 2300(±5) մմ: Աշխատանքային մակերեսը պետք է համապատասխանի նշված ստանդարտներին՝ GB/T 19001-2016 կամ ISO 9001:2015. Աշխատանքային մակերեսի դիմացկունությունը պետք է նախապես ստուգված լինի SEFA 3-2010 թեսթով ըստ 2.1 կետի, ստանալով միայն մեկ «1» գնահատական 48% հիդրոֆտորաթթվի դեպքում , մնացած

			թեսթով նախատեսված նյութերի դեպքում գնահատականը պետք է լինի «0» A և B մեթոդների դեպքում: Ստանդարտներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը ներկայացնել հայտին կցված: Աշխատանքային բոքս՝ աշխատանքային տարածքի խորությունը – 700(±5) մմ: Սեղանն ունի ընդհանրապես առանց կարերի առջևի հակաթափման եզր: Պահարանի կորպուս - մետաղական թիթեղ ոչ պակաս քան 1մմ. Խողովակների հատվածը 25(±1)x25(±1)x1.5(±0.2) մմ: Դռների փեղկերը կրկնակի են և դուրս չեն գալիս քարշիչ պահարանի տիրույթից: Դռների փեղկերը բացվում են ուղղահայաց անվտանգ հակակշիռ մեխանիզմի հաշվին: Հակակշիռ մեխանիզմը տեղակայված է քարշիչ պահարանի ետնամասում: Փեղկերի պաշտպանիչ պանելները 5(±0.5) մմ հաստությամբ հարվածակայուն ապակի են, ցանկացած բարձրության վրա ամրանալու և 0-ից 700(±5) մմ բարձրանալու հնարավորությամբ: Օդաքարշ համակարգի երկու մակարդակները ապահովում են հավասարաչափ հոսք ամբողջ պահարանի ներսում: Պահարանի աշխատանքային խցիկից օդի հեռացումը իրականացվում է քարշիչ խողովակով՝ եզրագիծ D=200(±2) մմ : Հավաքածու՝ վարդակ-1հատ, վթարային անջատման համակարգ 16A-1հատ: Ծածկույթով պաշտպանված վարդակներ (IP20 3.2 կՎտ) - 2 հատ, փոշամեկուսիչ լամպ (IP65) 1 հատ: Ուղղանկյունաձև, մետաղական պրոֆիլից պատրաստված ամբողջովին եռակցված շրջանակ: Հավաքածույով նախատեսված բոլոր մասերի տեղակայումը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պահարանի աշխատանքային խցիկի ետևի պատին ձախ կամ աջ անկյունում , աշխատանքային մակերեսից 20(±2) սմ բարձրության վրա տեղադրված են 4 հատ կափարիչով պաշտպանված վարդակներ (IP20 3.2 կՎտ), որոնց համար պահարանի դրսի հատվածում նախատեսված են անջատիչներ՝ յուրաքանչյուր վարդակի համար առանձին: Պահարանի հիմքը տեղադրված է կարգավորվող ոտքերի վրա 0-ից 10(±2) մմ: 1 Պահարան՝ մետաղական շարժողական սահող դռներով: Դռան ներքին կողմի նյութը մետաղական պանելներ են:

			Պահարանն ապահովում է ոչ խիստ ագրեսիվ նյութերի ժամանակավոր և անվտանգ պահպանում: Պահարանը բաժանված է երկու խցիկի՝ յուրաքանչյուրը ունի 120(±2)x60(±2) մմ չափսի միացման եզր՝ քարշիչ համակարգին միանալու համար, աջ խցիկում կա ներկառուցված դարակ: Քարշիչ պահարանի աշխատանքային մակերեսին ներկառուցված սիֆոնով ջրահեռացման լվացարանը (բոլոր քարշիչ պահարանների համար) պատրաստված է քիմիապես և մեխանիկորեն դիմացկուն էպոքսիդային համապոլիմերից: Չափերը՝ 260(±3)x110(±3)x150(±3)մմ, ունի 2 ծորակ սառը ջրի համար: Լվացարանի և ծորակների տեղակայման տեղը աշխատանքային մակերեսի վրա նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցամասերի մակերեսը փոշիապատված է էպոքսիդային խեժերով: Ծորակները պատրաստված են CZ121 և BS2872 պղնձե խողովակներից, որոնք մշակված են թույլատրելի չափերով՝ արտադրանքի բարձր որակ ապահովելու համար: Մատակարարումից առաջ ներկայացնել որակի և ծագման սերտիֆիկատներ և 1 տարվա երաշխիք: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և չպետք է պարունակի օգտագործած կամ կիսամաշ դետալներ: Կախված սենյակում կոմունիկացիոն և տարածական դասավորվածության բարդություններից անհրաժեշտ է լրացուցիչ ճշգրտումներ իրականացնել պատվիրատուի հետ և ցուցաբերել անհատական մոտեցում: Անհրաժեշտ է մատակարարումից առաջ պատվիրատուին ներկայացնել գծագրեր և սենյակներում կահույքի տեղադրվածության եռաչափ մոդելավորում: Ապրանքը մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարված ապրանքին կից ներկայացնել տեխնիկական գրքույկ Քարշիչ պահարանների առաքումը, տեղադրումը և ստուգումը պետք է իրականացվի մատակարարի կողմից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКО ДЕКОР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/126 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
3			